

ՅԻՍՈՒՍԻ ՈԳԵԿԱՆ ՆԵՐՅԱՅԵՑՈՂՈՒԹԻՒՆԸ

- 1. ԼԵՐԱՆ ՔԱՐՈՋԻ ՊԱՅՈՒՆ**
- 2. ՂԱԶԱՐՈՍԻ ԳԵՐԵՋՄԱՆԻՆ ՇՈՒՐՋ**
- 3. ՅՈՒԴԱՅԻ ՀԱՄԲՈՅՐԻՆ ԲՈՊԷԻՆ**
- 4. ԽԱԶԵԼՈՒԹԵԱՆ, ՑԱԻՆ ՈՒ ՏԱՌԱՊԱՆՔԻՆ**
- 5. ՅԱՐՈՒԹԵԱՆ ՈՒ ՅԱՂԹՈՒԹԵԱՆ**

**JESUS CHRIST'S SPIRITUAL CONTEMPLATIVE
MOMENTS AT**

**ԱԼՊԷՌ ՆՈՐԱՏՈՒՆԿԵԱՆ
ՀԱՅ-ՔՐԻՍՏՈՆԵԱՅ
1997**

Մ Ո Ւ Տ Ք

հոգեկան աջխարհի մէջ կան ապրումներ և ըմբռնումներ, որոնք մեր հինգ զգայարաններով հասկնալի չեն, այլ ներհայեցողական և հոգետեսական կարողութեամբ իմանալի են միայն:

Քրիստոս ըլլալով երկնառաք Պետպանն Հօր Աստուծոյ, չենք կրնար միայն պատմական կամ իմաստասիրական հայեացքով Ձայն հասկնալ: Հրաշալի խորհուրդ դէպքի մը կրնանք մօտենալ ներհայեաց հոգետեսութեամբ միայն: Ներհայեցողութիւնը կը նկատուի ճանաչողութեան գերագոյն կերպը որուն կը հասնի ենթական միասնական և անհատական աղօթքի պահուն: Աղօթքը սրբարանն ու ելարանն է դէպի Արհայութիւն:

Քրիստոնեան հրաւիրուած է հոգեւոր խորհրդածութեան որ հիմնական խարիսխն ու ներշնչարանը կը կազմէ Յիսուսի Մարդեղութեան: Քրիստոնեայի մը դերը՝ հաւատալ տառապիլ և սպասել է: Աջակերտները չէին ճանչնար Յիսուսը սակայն հետեւեցան Անոր առանց առարկութեան, բնական մղումով, խնդրութեամբ և սիրով: Յիսուս կը յայտնուի մարդոց ամէն տեղ ամէն ժամ: Զսաներորդ դարու մարդ, դո՛ւն ճանչցիր Ձիւն՝ նաեւ դո՛ւն:

Բայց Յիսուս կրնայ յայտնուիլ նաեւ Ման՛ուկ մը իբրեւ՝ մտւորին մէջ, Չափահաս մը իբրեւ՝ մայթերուն վրայ, անօթի, ծարաւ էակ մը իբրեւ, քանտարկեա՛լ մը: Բա՛ց դուռդ, գործադրէ՛ Իր պատուերը:

Կը ձօնեմ այս գրութիւնը պարզ ու համեստ հաւատացեալներու և Յիսուսը սիրողներու, որոնց կրօնական ներատեսութիւնը աւելի խո՛ր է և աղօթքը աւելի ազդեցիկ, Բան կարգ մը աստուածաբան անուանեալներու կամ ակադեմական ֆունդատներու:

Աստուած՝ Ինք թող կանչէ Իր մշակները:

Նոյեմբեր 22, 1997
Թորոնթօ

Ալպէր Նորատունկեան
Հայ-Քրիստոնեայ

ՅԻՍՈՒՍԻ ՀՈԳԵԿԱՆ ՆԵՐՀԱՅԵՑՈՂՈՒԹԻՒՆԸ ԼԵՐԱՆ ՔԱՐՈՋԻ ՊԱՀՈՒՆ

Երկինքները ճեղքելով ու ծիր կաթինի լուսաճաճանչ հորի- գունները թողելով եկած է Որդին Մարդոյ, խոնարհեցուցած Ինքզինք, ու նստած ծառի մը կոտրած ճիւղին վրայ ու կը պատ- գամէ տասնեակ հարիւրաւորներու՝ աստուածային սէրն ու Անոր խնամատար յայտնութիւնները: Յիսուս ոչ միայն կը պատմէ, այլ Իր լուսեղէն ձեռքերը կը նկարեն ու կ'առարկայացնեն Իր երկնային պատմութիւնները: Ան՝ մարդկային հասկացողութեան մէջ, զԱստուած կը մարդկայնացնէ, այսինքն, Ջայն բարեգութ և կարեկից կը պատկերէ:

Նախաքրիստոնէական դարերուն, մարդիկ իրենց աստուածները փայտի և մետաղի վերածած էին, անբան և անշարժ, անզգայ և անհոգի առարկաներու:

Այգալոյսող Գալիլեացին՝ հարուստներու և զօրաւորներու լիազօրութենէն իլեց զԱստուած, ու ջնորհեց Ջայն նաեւ աղքատին ու տկարին, մեղաւորին ու հոգեւոր արկածեալին, վտիտին ու հիւանդին:

Յիսուս թողուց երկնային հրեշտակներու երգեհոն երած շտուկիւնը ու հաճեցաւ գալ լսելու ժխորն ու աղմուկը աշխարհի: Իմանա՛լ լացն ու ցաւը և աստուածը նորդէմ պոռթկումները տառապող մարդկութեան: Անոր զթարատ Աչքերը դիտեցին սգաւորները, աղքատները և խղճահար մեղաւորները, որոնք բռնաւորուած ու կեղեքուած էին հարուստ չակերտուած բարեպաշտներէ: Անոր անստուեր Աչքերը տեսան կեղծաւոր եկեղեցապաշտները և աստուածապաշտ ամբարիշտները:

Մագնիսական ձգողականութեամբ՝ սիրոյ մէկ սլացֆին մէջ, Ան յայտարարեց.

«Երանի՛ հոգւով աղքատներու և վասնզի անունն է երկինքի Թագաւորութիւնը», «Երանի՛ սգաւորներու և որովհետեւ անունք պիտի միջիթարուին: Երանի՛ հեզերու և որովհետեւ անունք երկիրը պիտի ժառանգեն»:

Յիսուս Իր ապրումէն՝ նոր հորիզոն մը բացաւ այն սրտերուն մէջ որ միշտ անարգուած ու նուաստացուած կը կարծէին ըլլալ: Մովսիսական Օրէնքն ու Հելլենական իմաստասիրութիւնը չէր կրցած ըմբռնել հոգիով աղքատութեան, հեզութեան և ողորմածութեան վսեմ ու սրբազան բարձունքը: Յիսուս Իր Անձին և ապրումին միջոցաւ ցոյց տուաւ Աստուծոյ Դիմագիծը, ոչ որպէս *նախանձնա* ու *վրէժխնայի*: Արարիչ, այլ սիրող և անյիջաչար երկնային Հայր:

Իր կարեկցութեան խօսքերը, Իր լուսեղէն Աչին հպումը, Իր

արցունքախօս նայուածքին ազդուութիւնը և մանաւանդ արդարութիւն և իրաւունք պահանջող ջատագովութիւնները, յոյսի և լոյսի կանթեղներ բռնկեցուցին անիրաւուած ու կեղեքուած, անտուն և անտրական հոգիներէն ներս, երբ իմացան հոգեպարար,

«Երանի՜ անոնց, որ կը հալածուին արդարութեան համար, ու երանի՜ անոնց որ ինքնուրուագ են ծարաւն ու նին արդարութեան, որովհետեւ անոնք պիտի յազենան», երկնագեղ խօսքերը:

Բարութիւնը մարմնացնող Նազարէթի Մարգարէն, Իր սեւեռումին առարկայ ըրած էր Հռոմի հարուստ Կայսրութեան դաժան գերեզմանութիւնը: Ականատես եղած էր ընտանիքներու բռնի բաժանումին և անոնց զաւակներու առուծախին: Անմոռնչ հեծութեամբ խորհուրդներու ընդերքէն ոգեկոչեց Ան, ու յաւերժական դատաստանագիրքին մէջ արձանագրեց.

«Երանի՜ սգաւորներուն, որովհետեւ անո՛նք պիտի մխիթարուին»:

Իր բոցավառ հայեացքի հորիզոնէն նշմարած էր նաեւ անձնասէր, ինքնակոչ ու ցուցամոլ Փարիսեցիները և Օրինականները, որոնք կը ներկայացնէին ժամանակակից հոգեւոր ու բարեպաշտ հաւատացեալները: Իր քննադատական նետահարումները ուղղեց այս կեղծաւոր հոգեւորական կարծեցեալ խումբին ու որոտաց, ըսելով.

«Վա՛յ ձեզի՜ դպիրներուդ և կեղծաւոր փարիսեցիներուդ, որ երկնիւնքի արմալութիւնը կը փակէ՛ք մարդոց առջեւ, դուք չէ՛ք մտնել և մտնողներուն ալ թող չէ՛ք տար որ մտնեն: Վա՛յ ձեզի կողք առաջնորդներ, որ մժողուկները կը բամբէ՛ք, բայց ուղտերը կը կլլէ՛ք: ...Վա՛յ ձեզի... որ զաւաթին ու պնակին դուրսի կողմը կը մաքրէ՛ք, մինչ անոնք՝ ներսէն լեցու են գողութեամբ և անծուծ-կալութեամբ: Ան՛եր, ի՞ժերու՛ ծնու նոյնը, ինչպէ՛ս պիտի փայտչի՞ք գեհե՛նի դատապարտութենէն»:

Յիսուսի ազգասիրական հոգին ու հրէական բարձրաթուիչ մարգարէաշունչ մշակոյթը Իր անձնամատոյց հոգիին թելերը շարժեցին, և Յիսուս արցունքախօս աչքերով ըսաւ.

«Երուսաղէ՛մ, Երուսաղէ՛մ, որ կը կոտորէիր մարգարէները և կը բարկութէիր Բեզի դրկուածները. Բանի՜ Բանի անգամ ու գեցի հաւաքել քու զաւակներդ, ինչպէս հաւը կը հաւաքէ իր ձագերը թե՛ երուստակ, բայց չու գեցիք: Այսուհետեւ զիս այլեւս պիտի չտեսնէ՛ք, մինչեւ որ ըսէ՛ք՝ զրհնեալ է ան, որ կը գայ Տիրոջ անու նով»:

Գաղափարի և ազատութեան Ջահակի Յիսուս՝ ինչո՞ւ որոտագոչ ձաղկեց կրօնական և հոգեւորական կեղծ վարմունքը դպիրներու և փարիսեցիներու որոնք պաշտպանն էին Եկեղեցիին ու դպրութեան, ու սակայն արջալոյսի պէս Բնֆուջ վարուեցաւ անհաւատարիմ ու հանրակին էակներու հետ: Հարցում մը որ երեւոյթներու խորքը թափանցող ոգեկան ներհայեցողութիւն կը պահանջէ:

Ազատութիւն արդարութիւն վճռող Յիսուսի բերուեցաւ պոռնիկ մը դպիրներու և փարիսեցիներու կողմէ, որպէսզի դատաստան տեսնէ: Զակերտուած բարեպաշտներ հարցուցին Յիսուսի. «Վարդապետ, այս կինը շնութեան մէջ այս մեղքը գործած ատենը բռնուեցաւ...: Սովսէս մեզի պատուիրեց այսպիսիները քարկոծել. *արդ դուն ի՞նչ կ'ըսես*»: Յիսուս՝ Իր ապրումէն հորիզոն մը բացաւ այս քարսիրտ հոգեւորականներու սրտին ու խղճին դիմաց: Երբ ամբոխը խղճահար, տագնապած և ամօթահար թողուց կինը Տաճարի սալաշատակին վրայ ու անյայտացաւ, Յիսուս վեր նայելով և շուրջը կնոջմէ գատ մէ՛կը չտեսնելով, ըսաւ կաւեղէն դժբախտ բնութեան.

***«Ես ա՛լ չեմ դատապարտեր քեզ.
գնա՛ ու ասկէ ետեւ մեղք մի՛ գործեր»:***

Ինչո՞ւ համար այսպիսի՝ կարեկցութեան խօսքեր և ճառագայթող յաւերժաբոյր յոյս, սէր և խրախոյս մեղաւորի մը, որ իսկապէս և իրաւամբ մեղքի արարքին մէջ բռնուած ու Սովսէսի Օրէնքով մահապարտ էր:

Մարդ արարածին մարմնակից և պատկերակից Աստուած-Որդին, երբ մեր բնութեան բովանդակ էութեան մասնակից ըրաւ Ինքզինք, այ՛ն ատեն լման ըմբռնեց մարդ արարածին ակամայ մեղանչումները, որոնց անյագ և անդիմարդելի մղումները, աւելի զօրաւոր են քան իր զգացումներն ու բանականութիւնը:

Հողակառոյց սեռային մղումները խորհրդաւոր և զարմանահրաշ նմանութիւններ են գոյատեւումի և յաւիտենականութեան: Ոգեկան խորհրդազգաց վերացումի սերնդագործող և ստեղծագործող արա՛րքն է որ այս աշխարհը մշտնջենաւորած է մարդկային, կենդանական ու բուսական տարածութեան գոյութեամբ: Սեռային անյագ բնագոյն ու բոցանման մղումները՝ այնքան դատապարտելի չե՛ն, կեանքի բոլոր որոտները թափանցող աստուածայայտնիչ Վարդապետէն, որքան կեղծարարութիւնը, ընչաճաղցութիւնը և փառասիրութիւնը:

Մարդկային յօրինուածքը աւելի դիւրա՛ւ կրնայ զսպել իր անարդարութիւնն ու ընչաճաղցութիւնը, քան թէ իր սեռային մղումները: Որովհետեւ, աշխարհ, իր ստեղծագործող անյագ ու բոցակէզ բնագոյով կը ջանայ յաւերժացնել արեգակնային դրութեան միակ կենդանական երկիր

մուրակը:

Հնարաւոր է ապրիլ առանց կեղծաւորելու և առանց ընչափաղ-
ցութեան, սակայն առանց սեռային յարաբերութեան, կեանքը թէ՛ տաժանելի է,
թէ՛ փորձիչ է և աշխարհ մուրակի կեանքը կրնայ անյայտանալ:

Որպէս բարձունքի և վսեմութեան մարմնացում՝ Նազովրեցի Յիսուս,
Իր բոցավառ աչքերը կը սեւեռէ կեղծաւոր, ընչափաղց և փառասեր
կրօնավաճառներու, և Իր ծանր հրետանիով "վայ"եր կը կրակէ անոնց:

Թշուառ և եղկելի մարդը՝ որ կաշկանդուած է մեղքի պարաններով և
կամաջարժ բնութեամբ, աւելի ողորմութիւն և գութ կը գտնէ աստուածառափ
Յիսուս Զրիստոսի կողմէ:

Յիսուսի վերոյիջեալ ոգեկան ներհայեցողութիւնը, երբեք չ'արդա-
րացներ "ազատ սերն" ու աննկարագիր և բարոյագուրկ մարդկային
կենցաղավարութիւնը: Ինչո՞ւ, որովհետեւ չենք գիտեր թէ այդ հե՛ք կիներ
ինչո՞ւ սոյն արարքին մէջ գտնուած էր: Մոռնալու չե՛նք, որ երկու հազար
տարի առաջ որբեվայրի կամ լճուած կիս մը ներկայ աշխատավարձի
դիւրութիւնները չունէր: Իր գաւակներուն հաց ճարելը չափազանց դժուար
էր: Կամ պիտի մուրար, և կամ... :

Յուլիս 26, 1989

Թորոնթօ

ՅԻՍՈՒՍԻ ՀՈԳԵԿԱՆ ՆԵՐՅԱՅԵՑՈՂՈՒԹԻՒՆԸ ՂԱԶԱՐՈՍԻ ԳԵՐԵԶՄԱՆԻՆ ՇՈՒՐՋ

Հօր անհնանին Մնուսդ Յիսուս, Երկնային Արքայութեան մէջ կը ճանչնար անժամանակութեան գոյատեւումը, ուր ժամանակն ու դարաշրջանները յարաբերականօրէն հիւսուած էին Ստեղծիչ Արարչագործութեան: Իր աննուագ մարդկութեամբ և անթերի աստուածութեամբ՝ Յիսուս շրջեցաւ Գալիլիայի, Սամարիայի ու Երուսաղեմի շրջանները: Իր Աչքերը նշմարեցին զրկանք, հիւանդութիւն և մահ ու մնաւանդ ժամանակին որքա՞ն վաղանցիկ ըլլալն ու մարդկային կեանքի կարճութիւնը:

Այս մասին Յիսուս բացայայտօրէն կ'արտայայտուի ըսելով.

"Զանի որ ցերեկ է, աչտ է որ զիս Ղրկողին գործերը գործեմ. Գիշերը կու գայ երբ մէ՛կը չի կրնար գործել"--Յով. Թ. 4:

Համբերատար ու երկայնամիտ էր ժողովրդախնամ Մարգարէն: Օրէ օր, Իր Մարդեղութեամբ, աւելի մօտէն ճանչցաւ մարդ էակին զրկանքը, թերացումը և սխալանքը: Իր շրջագայութեան բոլոր տեսողութեան, Ան ականատես եղաւ ախտավարակ հիւանդութիւններու, ցաւին ու տառապանքին և մեղքերէ քայքայուած տխրադէմ ու թշուառ մարդկութեան, մինչեւ որ Ինքն ալ դարձաւ "վիշտերու տէր ու ցաւերու տեղեակ":

Կեանք բաշխող Մարդեղեալ Յիսուս, որքա՞ն ճանչցաւ ու գիտակից եղաւ մարդու կաւեղէն բնութեան, այնքա՞ն աւելի սիրեց Իր ստեղծած մարդը: Տուցամոլական և ձեւապաշտական արարքներու վերածուած գտաւ Իր Հօր Աղօթքի Տունը և հին առաքինութիւնները: Մարդ անհաղորդ մնացած էր իր Արարիչէն, և նիւթապաշտական աշխարհականութիւնը և հեշտամոլ մղումները գերի դարձուցած էին աստուածակերպ մարդը:

Գալիլեացի Աստուածորդին, որքան մօտէն ջանաց ճանչնալ մարդ-արարածը, այնքան առաւել նուիրումով սիրեց զայն: Բժշկեց հիւանդներն ու ախտաւորները, վերականգնեց կաղերն ու հաշմանդամները, տեսութիւն պարգեւեց կոյրերուն ու մահրագործեց բորոտները: Դիւահարները սրբագործեց վտարելով չար ոգիները և մեղքերու թողութիւն շնորհեց բոլոր զղջացող ապաշխարողներուն:

Չարին հակառակ չկեցաւ, այլ յաղթահարեց ու տապալեց անոր զօրութիւնը: Բազմաթիւ զրկանքներու և տառապանքներու համբերեց, սակայն երբ չարը իւրեց կեանքը Իր սիրելի Ղազարոս բարեկամին, ցնծութեան և ուրախութեան պարապութիւն մը զգաց Իր Հոգւոյն մէջ: Ղազարոսի

բարեկամութեան դատարկութիւնը անհանդուրժելի եկաւ Յիսուսի՝ որ Ակնադրիւրն է Կեանքի: Գալիլիոյ և Նազարէթի մէջ, շատ անգամներ ներկայ գտնուած էր Իրեն սիրելի և բարեկամ անձերու յուղարկաւորութեան: Սակայն Ղազարոսի մահուան լուրը Իր աշխարհային իրաւասութեան հարուած մը նկատեց:

Կարդացէ՛ք Յովհաննու Աւետարանի Ժ. Գլուխը ուր Յիսուս, որ ժամանակաւորը կը կամրջէ Յաւիտենականին և պատմութեան մեծագոյն անկիւնադարձը կը կերտէ, կու լայ՛ կաւեղէն բնութեան ջնջաւոր փոշիին առջեւ: Լոյսեր հագած Գալիլեացիին հար և նման կ'երելի Իրեն գոյակից մարդկութեան, սակայն առանց մեղքի: Նիւթական մարմինէն յաւէտ անբաժան՝ սակայն կեանք բաշխող Աստուած-Որդին է Ան:

Յիսուս կայնած Ղազարոսի գերեզմանին՝ կը դիտէ լացող սգաւորները և Մարիամ ու Մարթա բոյրերը: Ի՛նչ խորհուրդներ և մտածումներ կը ջրջագային Անոր Մտքի և Հոգիի հորիզոնէն: Ղազարոսի մահը՝ մարտահրրաւէր մըն է Յիսուսի կոչումին և առաքելութեան: Ան շատ հրաշքներ և բժշկութիւններ կատարած էր, միթէ անհրաժե՞շտ էր Իր այս գորութիւնն ալ ի յայտ բերել: Զարը՝ պէ՞տք էր ճանչնար Յիսուսի գորութեան անսահմանութիւնը:

Ղազարոսի գերեզմանին, Յիսուս ճաշակեց մարդ-արարածին թշուառութիւնը և անոր մահուանը անփախչելի վախճանը: Սգաւորներու անմխիթար լացին մէջ, Ան ճանչցաւ մարդկային կեանքի կարճութիւնն ու անստգութիւնը: Հո՛ն, դէ՛մ յանդիման մահուան ցուրտ իրականութեան՝ Յիսուս ըմբռնեց մարդկային ցաւը, տառապանքը և յուսահատութիւնը: Տառապանքն ու յուսահատութիւնն են որ մարդը կը բշտն մոլորանքի մութ ճամբան ուր մահաբեր բուսով ու պատուանքի կարթով գերի կը բռնուի ան Սատանային կողմէ:

Աստուածային առաքելութեան կէտ նպատակը, մարդը՝ հողեղէն ու կամաջարժ բնութիւնը, փոխակերպել և նմանցնել է երկնայինի և հոգեղէնի: Յոյսի և գոյատեւման Միջնորդ Յիսուս, ճանչցաւ մարդ-արարածի փոփոխութեան ընթացքն ու ձեռնարկը թէ որքա՛ն դժուար ու դանդաղ կը յառաջանայ ան:

Պատճառ՞ը:

Սոյն ձեռնարկին դանդաղ ու դժուար յառաջացման պատճառը ո՛չ աստուածային անգորութիւնն էր, այլ մարդկային հողայնութիւնը: Երկնային ճարտարապետի տեսլականին վսեմութիւնն ու սրբութիւնը այնքա՛ն վեհ ու բիւրեղային է, որ մարդկութեան հասողութիւնը կը կարօտի Արարիչին սիրոյ կարեկցութեան ու ողորմածութեան:

Յիսուս, ջրջապատուած լացողներով և սգաւորներով, գիտցաւ որ մարդ չ'ազնուանար ու չի բարելաւուիր օրէնքով ու կանոնով, այլ միայն **սիրով**, բարեգթութեամբ և զոհողութեամբ: Թէպէտ Յիսուս Ի՛նք յարուց Ղազարոսը

մահուրնէ, սակայն Իր մտածումի ընդերքէն բացուեցաւ անսպառ սիրոյ և համբերութեան ակնաղբիւր մը, որ Ձինձ ըրաւ Միջնորդ հողածին մարդու և Աստուծոյ միջեւ: Ղազարոսի գերեզմանին Յիսուսի լացը, մարդը կամրջեց Աստուծոյ և ժամանակաւորը Յաւիտենականին հետ:

Ղազարոսի գերեզմանին, Յիսուսի ոգեկան ներհայեցողութիւնը ճանչցաւ մարդը այնպէս ինչպէս որ էր ան--թշուառ ու եղկելի, սանձարձակ ու մտախաբ, սպառած աղբիւր և մարած կանթեղ--որուն "կիրքերը ուժգին, փառքը անժուժկալ և բնութիւնը կաւեղէն" է:

Խորիմաց տեսողութեամբ՝ Յիսուս ճանչցաւ մարդ-արարածը և փոխանակ պահանջելու զոհ ու մատաղ, Իր հոգեհմայ հայեացքով ըսաւ անոր, **«Որդիակ, բու մեղքերդ ներուած են բեզի, գնա և այսուհետեւ մի մեղանչ եր»:**

Յուլիս 27, 1989

Թորոնթօ

ՅԻՍՈՒՍԻ ՈԳԵԿԱՆ ՆԵՐՅԱՅԵՑՈՂՈՒԹԻՒՆԸ ՅՈՒԳԱՅԻ ՀԱՄԲՈՅՐԻ ԲՈՊԷՒՆ

Յիսուս՝ Իր անձնահատկությամբ ընտրած էր 12 աշակերտներ: Միրած էր զանոնք յաւերժաբոյր սիրով որովհետեւ անոնց հաւատարմութեանը մէջ կը տեսնէր Իր յաջորդականութիւնը և Իր եկեղեցիին գոյատեւումը: Յիսուս չընտրեց տաղանդաւոր աստուածաբան դպիրներ կամ իմաստասերներ, որովհետեւ Ինք կարող էր, Իր ընտրածները, ներքնապէս կերպարանափոխել և տաղանդաւոր դպիրներու վերածել:

Կեանք քաջխող Աստուածորդին կը նախընտրէր *հաւատարի՛մ* աշակերտներ ունենալ, քան խելացիներ: Իր աշակերտներուն և անոնց յաջորդող եկեղեցականներուն, Ինք կարող էր խելք և իմացականութիւն պարգեւել: Մէկ քան որ Յիսուս չէր ուզեր տալ Իր աշակերտներուն, հաւատարմութիւն և աննենգութիւն: Հաւատարմութիւն և վստահութիւն, միայն հաւատացո՛ղ աշակերտները պարտ էին տալ Իրեն, որովհետեւ Ձայն ճանչցած էին որպէս Գերիշխան: Յիսուս եթէ հաւատարմութեան կա՛մք տար Իր աշակերտներուն, ա՛յդ հաւատարմութիւնը մեքենակա՛ն պիտի ըլլար: Մարդ արարած՝ ի՛ր ազատ կամքով հաւատարմութիւն և սէր պարտ է յայտնել իր Տիրոջ:

Խորհրդապաշտ Գինիով և բեկանեալ Հացով՝ Յիսուս հաղորդուած էր Իր աշակերտներուն հետ վերնատան դահլիճին մէջ, ուր բաժակածառի ընթացքին յայտարարեց Իր վերագալուստը դէպի աշխարհ: Նախ քան մարգարէաշունչ բաժակածառը, Ան լուացած էր 12 աշակերտներու ցեխոտ ոտները սրբացնելու համար զիրենք ցարդ իրենց գործած մեղէներուն համար: Նոյնիսկ լուացած էր Յուդայի՛ն ալ ոտները սրբելով անոր ցարդ գործած դաւաճանութիւնը: Յիսուս ջանաց Իր Անձին և ապրումին միջոցաւ ցոյց տալ *“Եփրեցե՛ք ձեր թշնամիները”* պատուերը: Միայն սիրոյ սպառումով անձ մը կրնայ անսպառօրէն սիրել, որովհետեւ համայն տիեզերքի մէջ *սէ՛րն* է որ սպառելով կը բազմապատկուի:

Խնճոյքէն յետոյ, հոգեպարար Սաղմոս մը երգելով ձիթենիներու պարտզը գացին 11-ը և Յիսուս: Յուդա կը բացակայէր այս խնճոյքէն ու երգեցողութենէն: 11 աշակերտները բնաւ չնշմարեցին իրենց ընկերոջ՝ Յուդայի բացակայութիւնը: Պատճառներէն ոմանք կրնայ Յուդայի հպարտութիւնը ըլլալ, որովհետեւ իրենց միաբանութեան գանձապահն էր, կամ որպէս ազգասէր յեղափոխական՝ նուաստօրէն կը դիտէր միւս աշակերտները, իրեն վերապահելով մտաւորականի հովերը:

Հակառակ որ Յիսուս գիտակից էր այս բոլոր անց ու դարձերուն, դեռ կը սիրէր Իր կորուսեալ ոչխարը: Խնճոյքի ընթացքին, Յիսուս առաջին

պատարը թաթխած և հրամցուցած էր Յուդայի, անոր որ Ձինք պիտի դաւաճանէր: Յուդան առաւ յաւիտենականութեան պատարը և դուրս ելաւ: Լուսաջահ Յոյսի Ակնադրիւրէն՝ գրկելու խաւարը և ընդունելու Սատանան իր հոգիէն ներս: Լուսեղէն Ձեռներու հպումով սրբացած ու մաքրուած, Յուդա իր յամառ մղեռանդութեան և դրամասիրութեան համար թակարդեց իր ինքնութիւնը խաբեքայ պարաններով:

Ձիթենիներու պարտեզին մէջ Յիսուս ոչ միայն կ'աղօթէր ու կը հաղորդուէր Հօրը հետ Իր անձկութեան համար, այլ նաեւ դաւաճանող մատնիչ Յուդայի և ուրացող Պետրոսի համար ալ: Յիսուսի հոգեկան մաքրումները ոչ միայն Իր Անձի'ն համար էին, այլ այն "Փոքրիկ Հօտին" համար որոնց ամենացայտուն երկու անձերը, արդէն դասալիք ու պարտազանց էին Իրեն և Իր Սուրբ առաքելութեան: Քրտինքի կաթիլները որ կ'իջնէին արեան նման, ոչ թէ նշանակ էին վախի կամ մարմնական ցաւի, այլ այն հոգեկան ներհայեցողութեան, որով Ան կը տեսնէր Իր երեք տարուայ զոհողութեամբ կառուցած փոքրիկ միաբանութեան փջրուիլը և փլուզումը:

Ոգեկան նախատեսութեամբ Ան կը դիտէր Յուդա աշակերտին սակարկելը Զահնայապետին հետ: Պետրոսի նման յանդուգն աշակերտին երկչոտութիւնը աղախինի մը առջեւ, և Թովմասի նման մտաւորականի մը անհաւատութիւնը աշակերտներու միաբանութեան մէջ: Մեծագոյն դժբախտութիւնը այն պիտի ըլլար, որ աշակերտները երեք տարիներու Անոր բրտնաջան դաստիարակութենէ վերջ, ուր անոնք ականատես եղան հրաշագործ բժշկութիւններու ու գերբնական դէպքերու, պիտի լքեն իրենց կոչումը ու վերադառնան ձկնորսավաճառութեան:

Այսպիսի մտախռովութիւններու բուպէին, յանկարծ խոր մթութեան մէջ, Յիսուս տեսաւ խաւարեցնող ճրագները: Զահեր ոչ թէ լուսաւորելու, այլ խաբելու ու կեղծելու ճշմարտութիւնը: Մադայելական խուժանին առջեւէն կը քալէր Յուդա: Երբ ան մօտեցաւ ձիթենիներու մէջ կայնած Լուսահանդերձ Աղօթողին, Յուդայի մարմինին մէջէն սարսուռ մը անցաւ: Սատանան կայծակի հարուածով Յուդան դարձուց անզգայ, անսիրտ և անպատկառ: Յուդա՝ որպէս մարմնացեալ սատանայ մօտեցաւ աստուածայայտնիչ Լուսաջահին դրոշմելու համար իր գարջելի համբոյրը:

Յիսուս Իր ողորմագին նայուածով մահէն ազատեց Իր մոլորած աշակերտ Յուդան: Ապա թէ ոչ, այդ գարջահոտ և ժանտահոտ համբոյրի հպումը Սրբութեան Դէմքին, կրնար իսկոյն անշնչացնել Յուդան:

Յիսուս, երկա՛ր նայեցաւ Յուդայի, դիտեց անոր հոգեկան մաքրումները և ինքզինք ազատելու ջանքերը չարին ծուղակէն: Յիսուս ուղղեց Իր ճառագայթող սեւեռումները Յուդայի բիբերուն որ վտարէ Սատանան իր աշակերտին ընդերքէն, սակայն Յուդա ազահօրէն կառչած էր ՅՕ կտոր արծաթին: Երբեմն ազահօրութիւնը պլլուած էր Յուդային ու երբեմն ալ Յուդան ի՛նք փաթթուած էր արծաթին:

Յիսուս լուացած էր Յուդային ալ ոտները և սրբագործած զինք:
Սակայն այդ ճակատագրական բուպէին ան դարձած էր մարմնացեալ սատանայ
և կորսնցուցած իր կամքը: Առանց Յուդայի կամեցողութեան, իր վարդապետը
չէր ուզեր բունանալ անոր անձին և ինքնութեան իրաւասութիւններուն:
Յիսուսի ցաւն ու տառապանքը Իր ձերբակալութիւնն ու դատապարտութիւնը
չէր, այլ հէ՛ք Յուդայի գահավէժ անկումը դէպի կորուստ, թէ՛ անոր մարմնին և
թէ՛ հոգիին:

Կալանաւոր Յիսուս կը բալէր դէպի դատապարտութիւն, սակայն երբեմն
կը դիտէր Յուդան, այն աջակետը որուն այնքան վստահած էր: Ան որ առա-
ջիններէն էր որ եկած ու միացած էր Իր նուիրական Միաբանութեան: Ան
որ մասնակից եղած էր իր մտերիմ խօսքերուն և յայտնութիւններուն: Ան
որ սպասարկած էր 5000-ի կերուխումին: Ու հիմա նման սողունի և օձի, Իրեն
կ'ընկերանար դէպի Կայաբայի վեհարանը:

Յիսուս, ինչպէ՞ս դասէր Իր այս ոչխարը որպէս դաւաճան որ
ամենազագրեղի արարքն է վստահութեան: Ա՛յս էր Յիսուսի ցաւն ու տառա-
պանքը և հոգւոյն խռովքը, երբ սատանայաբոյր ջրթունքները, դաւաճան
Յուդայի, դպան լուսեղէն և սուրբ Դէմքին, Բարութիւնը մարմնացնող
Գալիլեացիին:

Յուլիս 28, 1989
Թորոնթօ

ՅԻՍՈՒՍԻ ՈԳԵԿԱՆ ՆԵՐՅԱՅԵՑՈՂՈՒԹԻՒՆԸ ԽԱՂԵԼՈՒԹԵԱՆ, ՑԱՒԻՆ ՈՒ ՏԱՌԱՊԱՆՔԻՆ

Յիսուս Զրիստոսի Խաչելութիւնը՝ տիկիներու վիզէն կախուած ոսկի խաչերը չեն, ոչ ալ եկեղեցիներու երկնաւազ գմբէթները զարդարող արեւափայլ խաչերը:

Խաչելութիւնը՝ Աստուծոյ բաժնեկցիլն ու մասնակցիլն է մարդկութեան ցաւին և տառապանքին:

Քաղաքական կուսակցութիւնները շատ բաներ կը խոստանան Բուէարկող հանրութեան, սակայն այդ խոստումները ի գօրու են մինչեւ կուսակցութեան ընտրութիւնը: Միբահարուած զոյգեր՝ շատ բաներ կ'երդնուն իրարու Ա. Խորանին առջեւ, սակայն երբ նեղութիւններ պատահին և զրկանքի օրեր իրար յաջորդեն, խոստումները և ուխտերը ջուտով կը մոռցուին ու կը ցնդին:

Աստուածաբան Դեապանը այդպէս խոստմնադրուծ չեղաւ Իր ուխտին: Ինչ պատուէ՛ր, կանոն և թելադրութիւն որ յորդորեց Իրեն հետեւողներուն, Ի՛նք յարգեց ու կատարեց զանոնք: Խաչի ճանապարհին, յոգնած և անհուն, անօթի ու ծառաւ, Յիսուս շալկեց աշխարհի՛ խաչը ու ուրր մուրր նեղ փողոցներէն ուղղուեցաւ դէպի Գողգոթա յայտնաբերելու Աստուծոյ Միրավառ Միրտը:

Հայ գրականութեան կարգ մը բանաստեղծներ և ազգանուէր հայկականեր, բնական մղումներու ճնշման տակ, հոգեկան պրոթկումներ ունեցած և հարցուցած են, *«Մէ՛ր էր Աստուած 1895 թ. Աստուայի Դէպքին կամ ի՞նչ կ'ընէր Աստուած Մեծ Եղեռնի արշիտողով ջրջանկիւ»*: Հարցումներ, որոնք թէ՛ արդար են և թէ՛ պատասխանի կը կարօտին:

Հարցումներ ուղղել Աստուծոյ, որդիական յարաբերութեան մտերմութիւնը ցոյց կու տան: Սակայն Աստուծոյ դէմ ըմբոստանալ, Զինք նախատել կը նշանակէ ու նաեւ մեր տգիտութիւնը:

Վերոյիջեալ բոլոր հարցումներուն պատասխանները կան: Սակայն մարդ արարածը, զանոնք ըմբունելու կարողութիւնը չունի, կամ զանոնք հասկնալու չափահասութեան դեռ չէ յանգած: Զօր օրինակ, երեք տարեկան փոքրիկ մը իր մօրը կը հարցնէ, «մամա, ես ինչպէ՞ս աշխարհ եկայ»: Ծատ պարզ և բնական հարցում մըն է այդ: Միթէ՛ երեք տարեկան փոքրիկը իր հարցման պարզ պատասխանը կրնա՞յ փորձառապէս նաեւ հասկնալ:

Ուրիշ հարցում մը: Բանի՞՞ գիտնականներ կրնան պատասխանել թէ ինչ կայ աստղերէն անդին տիեզերական տարածութեան մէջ: Ո՞ւր կը վերջանայ տիեզերքի տարածութեան ջրջագիծը: Հարցումներ կան որոնց

պատասխանները չենք գիտեր: Ու մերթ՝ մեր չգիտնալը, մեր բարիքին կը նպաստէ:

Աստուած ո՞ւր էր "Ատանայի դէպքին ու 1915-ի Եղեռնի" հարցման, կ'ուզեմ պատասխանել սապէս.

Աստուած *Ինձն*, ալ մեզի հետ կը **տառապէր**
և մեզի **ցաւակից** կ'ըլլար որովհետեւ, որպէս
մարդ, մենք *Իջուհն* միայն կ'ապրինք և կանք:

Աստուածային տառապանքին ու ցաւին որպէս ապացոյց՝ Գողգոթայի սարին վրայի Խաչեցեալն է: Աստուած կարող էր 12 գունդէ աւելի հրեշտակներ դրկել և ազատագրել Իր Որդին, և սակայն չըրաւ: Ինչո՞ւ: Որպէսզի ապացուցանէ մարդ արարածին թէ Ինք եւս մասնակից է աշխարհի տառապանքին և ցաւին: Տառապանքն ու ցաւը մարդ էակին ստեղծագործ երկունքին եղանակն (process) է:

Մարդկութեան ցաւին և տառապանքին գլխաւոր պատճառը, մարդ ինքը եղած է: Ով էր պատճառը Վիեթնամի աղէտին և նախճիրներուն ուր բազմահազար հոգիներ կորսուեցան: Եթէ ոչ ազահութիւնն ու ընչաքաղցութիւնը: Ո՞վ սպաննեց Չիլիի Վար-չապետ Այանտէն և երկիրը մատնեց երկար տարիներու արիւնայեղութեան: Միջին Արեւելքի ողբերգութիւնը, միթէ աստուածայի՞ն կամքն էր որ մարդիկ տառապին ու մատնուին մահուան ու ցաւի սեւ ճակատագրին:

Եթէ Աստուած Իր զօրութեամբը պիտի միջամտէ մարդկային ցեղի իւրաքանչիւր, անհատական և ազգային սխալանքները, մարդկութիւնը ինչպէ՞ս և ե՞րբ պիտի սորվի ներդաշնակ ապրիլը: Որպէս ծնողներ, պիտի ուզէի՞ք սանցահար ապրեցնել ձեր զաւակները, թէ ոչ իրենց կամեցողութեամբ կը փափաքէիք տեսնել զիրենք, բարեացակամ և արդար: Նոյնանման դրութեան մէջն է նաեւ Աստուած: Ան կրնայ մեքենայի վերածել մեզ: Մակայն կը նախընտրէ որ մենք *ապրի՛չ տրուինք* սիրով և համերաջխօրէն: Մինչ այդ՝ Աստուած ալ կը տառապի մարդկութեան հետ հասցնելու Իր մարդ արարչագործութիւնը աստուածանման կերպարին:

Անշուշտ թէ կան նաեւ անպատասխան հարցումներ: Անոնք անպատասխանելի են մարդկային սահմանափակ հասկացողութեան և անչափահաս սկարամտութեան պատճառաւ: Օրինակի համար, ինչո՞ւ Աստուած չսպաննեց Հերովդէս Թագաւորը ազատելու համար Տիտուս մանուկը, այլ Տիտուս և Իր ծնողքը գաղթական գացին Եգիպտոս: Ու շատ մը ուրիշ մանուկներու սպաննութեան պատճառ եղաւ նախանձ թագաւորը:

Պատասխանը՝ մենք չունինք *տալապիկ*, ոչ թէ չկայ:

Խաչի ճանապարհին՝ Տիտուսի կ'ընկերանային ոչ թէ Իր ընտրած աշակերտները, այլ դատապարտեալ զոյգ մը թշուառականներ, որոնք զոհը

դարձած էին իրենց կաւաջէն բնութեան ախտավարակ մղումներուն: Տառապանքի և կսկիծի, հայհոյանքի ու նախատինքի տարափին տակ մահուան դատապարտեալները, կ'ընթանային իրենց ճակատագրի մութ բարձունքը: Բոլոր անոնք որ ցոյց կու տային ըմբոստութեան բուռնցք, կամ կարեկից գաւաթ մը ջուր խաչեցեալ դատապարտեալներուն, փոխարէնը կը ստանային Հոռմէական մտրակի մոլեգին հարուածը:

Խաչի ճանապարհին՝ Յիսուս ըմպեց ցմրուր մարդ արարածներու ճակատագրուած տառապանքին ցաւը, երբ Ան ըսաւ, *«Եթէ մէկը աջ երեսը զարնէ, դարձուր միւսն ալ»:* Ինք առաջին կատարողը եղաւ այդ ոսկեղէն կանոնին: Ինչ պատուերներ և թելադրութիւններ որ ներշնչած էր Իր աջակերտներուն և բազմութիւններուն, շուկաներու մէջ, Տաճարին դրան սեմին կամ խնճոյքներու ընթացքին, որպէս գաղափարական հայեցողութիւններ, խաչի ճանապարհին, Իր ապրումովն ու նուիրումովը ապացուցանեց զանոնք:

Փոխանակ զէնքի ուժով ինքնապաշտպանութեան դիմելու-- *«Կը կարծե՞ս թէ չեմ կրնար աղաչել Իմ Հօրս, որ հիմա այստեղ Ինձի հասցնէ հրէջտակներու աւելի Բան տասներկու գունդեր»:* Բարցումը պատասխանի ձեւով ուղղեց Պետրոսի որ հաւատաւորն էր բուռնցքի և զէնքի զօրութեան: Իր անձնամատոյց զոհողութեան ընթացքին, Ան նկատեց մարդոց նիւթապաշտ վստահութիւնը նիզակի և սուրի զօրութեան: Յիսուս կառչած էր հաւատքի ժայռահիմ Աստուծոյ ծիածանաբոյր «Մի վախնա՛ք անոնցմէ՝ որ մարմնանիւթը կը սպաննեն, ու չեն կրնար հոգին սպաննել» հանդիսաւոր ուխտ խոստումին: Ինք որ յարուցած էր մօր մը միակ զաւակը, հօր մը աչքին լոյս աղջիկը և իր մտերիմ բարեկամ Ղազարոսը, հաւատքի անմար հրով աներկիւղ վստահեցաւ Իր կեանքը երկնային Հօր Ձեռքը: Մարդկային հոգին ու միտքը նիւթի կապանքներէն ազատագրած՝ հաւատքի լուսաւոր թելերուն թոկչեմովը ապաստանած էր Իր Հօր Բազկացը մէջ:

Յիսուս Բարոզեց ոչ միայն հաւատքի անխորտակելի Վահանը, երեք երկար տարիներ, այլ հաւատքի գոյատեւումը իմաստաւորեց Ան **Խաչի՛** ճանապարհին: Իր աներկեւան ու աներկիւղ վստահութիւնը առ Աստուած փաստարկեց թէ հաւատքը հոգւոյն գերագոյն տեսանելիութիւնն է:

Խաչեալ և արիւնաթոր Մարմինը երբ ճօճուելով բարձրացաւ օթին մէջ ու կանգնեցաւ երկինքի ու երկրի միջեւ, չարն ու կեղծը, խաբեքան և սուտը յարթութեան խնճոյքներ սարքեցին: Իսկ Անդին՝ Յիսուս Իր բարեգութ հայեացքը դարձուց Իր երկու խաչակիցներու վրան ու ջանաց ազատագրել հե՛ք մեռնելու ճակատագրուածները: Թէեւ երկու աւազակները նախ կը նախատէին Գալիլեացի Մարգարէն, սակայն ի վերջոյ մէկուն հոգեկան հորիզոնին վրայ լոյսի ճառագայթներ սկսան փայլփլիլ: Տագնապող հոգին, կրտսացող վերքերը և վերակենդանանալու մարմաջը արցունքի և ապաշխարանքի լեզուով աղաղակեց ըսելով. *«Յիշէ՛՛ զիս, Տէր երբ Բու*

Թագադրութեամբդ դառնաւ», փշոտ պսակով թագադրուած Նազովրեցի Մարգարէին:

Աշխարհի Փրկիչն ու Ազատարարը, արիւնաբաւ ու ծայրայեղ ցաւերու և ջղաձգութեան մէջ, մոռցաւ Իր տառապանքի մաքարումները: Իր լուսաճաճանչ սեւեռուն հմայֆով պարուրեց նորահաւատ աւազակը: Անոր մանանեխածիլ հաւատք ներշնչեց Ան ու խոստացաւ. *«Ճշմարիտ կ'ըսեմ/ քեզի այսօր, Ինձի հետ պիտի ըլլաս դրախտին մէջ»*: Աւազակին պլպացող հաւատքը գնահատուեցաւ, որովհետեւ ան իր հաւատքը ցուցաբերեց Անձի մը, որ մահուան ճանապարհին վրայ էր ու ոչ յաղթանակի դափնետապակով զարդարուած: Հաւատացեալ աւազակը կառչելով իր կենսանորոգ հաւատքին, արժանացաւ յաւիտենական կեանքի երաջխիհին:

Յիսուս՝ քաջալերուած աւազակին հաւատալիութեամբը, մոռցաւ Իր ցաւերն ու կոտտացող վերքերը: Վիշտն ու զրկանքը, հալածանքն ու մղձաւանջը դադրեցան Ջինք այլեւս յուսաբեկելէ և վհատեցնելէ: Մարմինը կմախքացած իսկ հոգին զօրացած՝ մահը արհամարհեց Ան ու նայեցաւ Ջինք դատապարտողներու աչքերուն ոչ թէ վրէժխնդրութեամբ, այլ արցունքի և սիրոյ հայեացքով ու դառնալով Իր երկնաւոր Հօր, **աղերսեց** Անոր ըսելով.

***«Հա՛յր ներէ՛՛ առնոց, որովհետեւ
չես գիտեր ի՛նչ կ'ընեն»***:

Վերոյիշեալ խօսքերը եթերին մէջ մագնիսացած՝ ցարդ կը ցնծերգեն ջնորհելով ներում և հաշտութիւն բոլոր անկեղծ ու սրտանց ապաշխարողներուն: Հռոմէացի խաչգամող հարիւրապետը՝ ականատես և ականջալուր այս վսեմ ու գերբնական ջնորհին, զգեստեց նիւթին զօրոյթը մատնացոյց ընող սուրը, և ծնկաչոք խաչին պատուանդանին գոչեց իր ընկերներուն. *«Արդարեւ Աստուծոյ Տրոյիս էր ասիկա»*.

Յիսուս գիտցաւ նոյնիսկ Իր նահատակութիւնը յաղթանակի վերածել, հաւատքի և զոջումի առաջնորդելով հռոմէացի հարիւրապետ մը: Նոյն անյիջաչար հայեացքով Յիսուս կը դիտէ քեզ և զիս: Պատիժի և վրէժխնդրութեան սեւեռում չկա՛յ Անոր աչքերուն մէջ այնպէս ինչպէս հեթանոս աստուածները: Միայն անսպառ սէր և ողորմութիւն կը ծորեն Անոր համբուրելի Աչքերը, և Անոր անմոռնչ հեծութիւնն է. **«Եկու՛ր Ինձի»**ն:

Յուլիս 28, 1989
Թորոնթօ

ՅԻՍՈՒՍԻ ՈԳԵԿԱՆ ՆԵՐՅԱՅԵՅՈՂՈՒԹԻՒՆԸ ՅԱՐՈՒԹԵԱՆ ՈՒ ՅԱՂԹՈՒԹԵԱՆ

Պետական ի՞նչ պատիւներու կ'արժանանայ ազգային հերոս մը երբ յաղթականօրէն վերադարձնայ պատերազմէն կամ ողիմպիական ոսկի մետալ ստանալէն :

Շղթայակապ մահուան դատապարտուած գերիներու շարքեր և նուաստացուած բոքիկ ու կիսամերկ արքայազուններ հետիոտն կ'ընթանան Հոռմեացի հերոս բանակներու ետեւէն:

Վերոյիջեալ ցուցադրութիւնն ու ծաղրանքը՝ վրէժխնդիր և աններող կամեցողութեան և հպարտ հոգիի արտացոլացումներն են:

Անխոցելի և անկիզելի Յիսուս՝ որ զգեստնեց մահը և կոխկոտեց գերեզմանը, պատմութեան մեծագոյն անկիւնադարձը կերտեց, նոր ներշնչումներու և նոր խոյանքներու, Իր Յարութեամբ: Արջալոյսի Բնիկը շողերուն մէջ, Յարուցեալ Տէրը, ամբարտաւան և վրէժխնդիր հոգի երբեք չյայտնաբերեց: Ձիւն մահուան դատապարտողները չգերեվարեց: Որպէս մահը Յաղթահարող Ախոյեա՛ն՝ Ինքզինք չներկայացուց Պիղատոսի կամ Կայափա Քահանայապետին: Այդ բոլոր փոքրոցի սողունները վաղ անցեալի մոռացումի՛ մասնեց:

Յիսուս Ձիւն ասողներն ու նախասողները վէճի և դասի հարց չըրաւ, այլ՝ Ան փնտռեց Ի՛ր աջակերտները և Ձիւն սիրողները, հոգ չէ թէ Ձիւն լքած էին կամ Ձիւն չէին հասկցած, անոնք սիրած և համակրած էին Իրեն, մտերմութեան և հոգեկան հաղորդութեան զգացողութիւն մը ունեցած էին Իր հետ:

Մարիամ Մագթաղենացին որ անհամեմատ հորիզոնով և խորացումով կը սիրէր իր Տէրը, ցարդ չէր հաւատացած Անոր Յարութեան: Որովհետեւ ան կը փնտռէր *Մեռած* Յիսուս մը որ զմուսէ Չայն: Այսօր ալ շատ մը Բրիստոնեաներ կը փափափին տեսնել *զմեռած* Յիսուս մը յօրինելու Չայն *իրենց* մտապատկերին: Մարիամ Մագթաղենացին ուզեց զմուսել Յիսուսը, որովհետեւ կը սիրէր Չայն: Ներկայ Քրիստոնեաներ կ'ուզեն զմուսել Յիսուսը՝ *եղծելով* համար Չայն որ շարունակեն իրենց գեղծարարութիւնները:

Յիսուս անպայմանօրէն կ'երեւի բոլոր անոնց, որոնք անկեղծօրէն կը սիրեն Ձիւն և հաւատարմօրէն կ'ուզեն հետեւիլ Իրեն: Յիսուս չերեւցաւ Մագթաղենացիին որպէս պարտիզպան մը, այլ *Մարիամ ի՛նք* կարծեց թէ պարտիզպան մը կը տեսնէր, մինչեւ որ Յիսուս խօսեցաւ իր հետ:

Յիսուս մեզի՛ ալ շատ անգամներ երեւցած է, սակայն *Մե՛նք* չենք ճանչցած Ձիւն: *Մե՛նք*, Ձիւն օտարի տեղ սեպած ենք: Հետը չենք խօսած, մեր սուներէն և սրտերէն ներս չենք հրաւիրած Ձիւն և մեր ընկերային

ըրջանակէն ներս չենք ընդունած: Կամ չնանք հրաւիրել Ձինք մեր եկեղեցիներէն ներս, որովհետեւ փոխանակ իրարու վրայ սեր ունենալու, իրարու կը նախանձինք: Մեր "ես"ը այնքան փչուած ու խոշորցած է, որ եկեղեցիներու դուրսէն իսկ կ'երեւի մեր փառամոլութիւնը: Մակայն Յիսուս մեզ կը սիրէ դեռ, որովհետեւ Իր սերը անքաւ և անսպառ է:

Դիտենք Յիսուսի սերը հանդէպ Էմմաուսուսի ճամբորդներուն: Որքա՛ն կը տարբերի Անոր հայեացքն ու մօտեցումը մեր գաղափարական ու նեղմիտ հասկացողութենէն: Այս երկու աջակերտները թթու ազգայնամոլներ են: Իրենց համար, Յիսուս, միայն ազգայի՛ն չէրոս մը կը կարծուէր ըլլալ որ պիտի ազատագրէ հրեայ ազգը հռոմէական գերիշխանութենէն: Յիսուսի առաքելութիւնը շփոթած են Մակաբայեցւոց Ազգային Յեղափոխութեան հետ: Անոնք կ'ըսեն. *"Մենք կը յուսայինք՝ թէ ա՛ն ըլլար Իսրայէլի փրկիչը"*: Աշխարհի համայնածաւալ տառապեալները, իրենց հոգը չեն: Իրենց մտապատկերը՝ միայն կէս միլիոն հրեայ ազգն է...:

Այսպիսի նեղմիտ, տգէտ և մոլեռանդ անհատները, Յիսուս փոխակերպեց և դարձուց առաքեալներ և Իր եկեղեցւոյ շինարարները: Որովհետեւ Յիսուս ունէր ճշմարիտ և կենսագործող հայեացքն ու մօտեցումը հանդէպ մարդկութեան: Սերը որ անկարելին *կարելի* կ'ընէ:

Մարիամ Մագթաղենացիի միջոցաւ, Յիսուս, աջակերտները Իր Ոստերուն չհրաւիրեց: Վարանտ և երկչոտ աջակերտները իրարու բով եկած էին, հրեաներէն վախնալնուն համար--կարծես թէ իրենք հրեայ չըլլային--ու յանկարծ Յիսուս Ինք կ'երեւի անոնց: Յիսուս Ի՛նք կը փնտռէ Իր աջակերտները: Կը ջանայ զանոնք վերակենդանացնել, յուսադրել և գործի մղել: Ինքն է գործօն տինամիզմը: Ինքզինք մարմնապէս կը յայտնէ անոնց ըսելով. *"Ինչո՞ւ կը խոռվիք, և ինչո՞ւ ձեր սրտին մէջ տարակոյս կը մտնէ: Տեսէ՛ք Ձեռներս և ոտներս, ես ինքն եմ, ջօջափեցէ՛ք Ձիս ու տեսէ՛ք: Վասնզի ոգին մարմին և ոսկոր չունի, ինչպէս կը տեսնէք որ ես ու նիմա*.

Յիսուս Իր ընկերային դիրքաւորումը չփոխեց հանդէպ Իր աջակերտներուն նոյնիսկ Իր յաղթական Յարութենէն յետոյ: Ինչպէս կարգ մը հարուստներ կ'ընեն: Ինչպէս վերնատան սենեակը՝ Յիսուս իրենց հետ ճաշի նստած էր, նոյնպէս կը փափաքի ընթրել հիմա ալ՝ Հրաշափառ Յարութենէ յետոյ:

Երբ կը տեսնէ Իր աջակերտներուն օտարանալը իրենց երկնային Կոչումէն ու կը վերադառնան ձկնավաճառութեան, կը ճամբորդէ մինչեւ Գալիլիոյ ծովը որ փնտռէ ու գտնէ Իր ոչխարները: Ի՛նչ վսեմ հոգեբանական մօտեցում: Ի՛նչ վեհ և աստուածային հայեացք կը ցուցադրէ Յիսուս այն աջակերտներուն, որոնք իրենց կոչման անհնազանդ և անփոյթ են: Յիսուս կը գտնէ զանոնք Գալիլիոյ ծովագերիը յոգնած և յուսահատ: Կը հետաքրքրուի իրենց այդ օրուան որսով, ու երբ կ'իմանայ որ բան չեն կրցած որսալ, փոխանակ զիրենք յանդիմանելու որ լքած և պարտազանց են իրենց

երկնային տեսիլքին ու կոչմանը, որպէս աստուածային պատիժ, պիտի չկարենան որեւէ ձուկ որսալ: Ընդհակառակը, Ան կը ֆաջալերէ զիրենք որ ուրկանը այս ինչ տեղ նետեն:

Ձուկերու որսը այնքան շատ կ'ըլլայ որ կը վախնան որ մի գուցէ ուրկանը պատրի: Յիսուս Ի՞նչ գերբնական կերպով կը վերաբերի Իր սիրած աշակերտներուն հետ: Անօթի և յոգնած հե՛ք աշակերտները՝ հազիւ ցամաք ոտք կոխած, արդէն կը գտնեն պատրաստ կրակ, խորոված ձուկ և հաց ոչ թէ հինգ հազար անօթիներու համար, այլ տասնեակ մը Յիսուսը սիրողներուն համար: Ի՞նչ սիրոյ և անյիջաչարութեան առարկայական ու դրական արտայայտութիւն:

Ո՞ր կը տեսնենք հրէական պատժաւեր կամ պատժարար Աստուածը: Ընդհակառակը, Յիսուս դարձած է Հօր Աստուծոյ հարազատ և Կենդանի Թարգմանը: Ոգեկան սիրոյ ըմբռնումը կը գտնուի մեր արուեստագէտներու և իմաստասէրներու հասողութենէն դուրս: Յիսուս Իր սիրոյ ապրումով յայտնաբերեց Աստուծոյ սրտին սրովիւնը և *գիրքին ու տարրիւն ջու նչ ն ու ոգին*: Յիսուս՝ Իր նուիրական հայեացքով և զոհարար ապրումով փոխանակ աճիւն մը ըլլալու Իր աշակերտներուն սրտին մէջ, դարձաւ Շունչ ու Ոգի:

Յիսուսի ոգեկան հայեացքին խորհրդալից տրամը՝ կը տեսնենք Պետրոս աշակերտին հետ Իր ունեցած հարցազրոյցին արթիւ: Յիսուս ֆնֆշութեամբ մէկ կողմ կը ֆաջէ այն աշակերտը որ Ձինք երեք անգամներ ուրացած էր: Փոխանակ Պետրոսէ խոստովանանք պահանջելու, Յիսուս՝ շատ ֆաղցրութեամբ և փափկութեամբ, անոր կը հարցնէ. «Պետրո՞ս, Ձիս, կը սիրե՞ս»: Ո՛չ օրէնք, ո՛չ դատաստանագիրք, այլ միայն սիրոյ և բարի կամեցողութեան վրայ հիմնուած նուիրական խոստում: Այս է այն վեհագոյն օրէնսդրական կանոնը որ կառուցուած է սիրոյ և փոխադարձ հաւատարմութեան վրայ, որ կը գերազանցէ բոլոր դարերու և նաեւ 20-րդ դարու դատաստանական օրէնսդրութիւնը:

Աինչեւ որ մարդ արարածը չներթափանցէ աստուածային ոգեկան ներհայեցողութեան, Յիսուս և Իր աստուածայայտնիչ առաքելութիւնը պիտի մնան կմախֆացած տարր և գիր, ցուցադրուելու թանգարաններու ցուցափեղկերու ետին, որպէս անկենդան աճիւն:

Ի՞նչ կը ոգեկոչենք այսօ՛ր մեր խորհուրդներու ընդերքէն, մոխրացած դաւանանքի մասունքներ, թէ **ջէնջող հաւաքի կենսանորոք հրաջֆներ**:

Օգոստոս 2, 1989
Թորոնթօ